ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

պաշտոնավարման մեկ տարին լրանալու կապակցությամբ

2019 - 2020 հունվար

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարեսկզբից զբաղվածության տարածքային կենտրոնները համագործակցել են 2000 գործատուի հետ, որոնցից հավաքագրվել է 12 385 չկրկնվող թափուր աշխատատեղ, դրանցից 433-ը նոր ստեղծված:

2019 թվականի զբաղվածության պետական գործակալության աջակցությամբ աշխատանքի է տեղավորվել 11 582 աշխատանք փնտրող (7794-ը՝ կին, 3487-ը՝ երիտասարդ, 203–ը՝ հաշմանդամություն ունեցող անձ), որից 2026-ը կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերի արդյունքում: Բացի դրանից, տարեսկզբից ևս 2707 անձ զբաղվածության ծրագրերի արդյունքում ապահովվել է ժամանակավոր աշխատանքով:

Զբաղվածության պետական գործակալությունն առաջին անգամ թափուր աշխատատեղերի ուսումնասիրություն է իրականացրել շուրջ 20 000 գործատուների շրջանում և հավաքագրել շուրջ 12385 չկրկնվող թափուր աշխատատեղ, դրանցից 433-ը՝ նոր ստեղծված:

Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՀՀ կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից ստորագրվել է «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագիրը:

«Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» ծրագրի շրջանակում 161 համայնքում իրականացվել է 1514 ծրագիր, ծրագրերում ընդգրկվել է 1820 անձ, մշակվել է շուրջ 2236.9 հա հողատարածք:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առաջարկով՝ նվազագույն աշխատավարձի շեմ սահմանվեց 68.000 դրամը: Օրենսդրական փոփոխությունը նախաձեռնել էին ՀՀ ԱԺ մի խումբ պատգամավորներ:

30 %-ով բարձրացել է մտավոր և հոգեկան խնդիրներ ունեցող անձանց խնամքի ու վերականգնողական ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձը:

1001 ընտանիք ընդգրկվել են աղքատության փուլային հաղթահարման նոր ծրագրում: Ծրագրի շրջանակներում անասնապահությամբ զբաղվելու համար աջակցությունը կտրամադրվի ընտանիքներին՝ նպաստի իրավունքը 12 ամիս պահպանելու հետ զուգահեռաբար:

Գյուղատնտեսական սեզոնային աշխատանքով զբաղվող անձինք այլևս դուրս չեն մնա նպաստի համակարգից: Ավելին, գյուղատնտեսական սեզոնային աշխատանքով զբաղվելու պարագայում կտրվի առավել բարձր միավոր, ստացված եկամուտը չի հաշվարկվի ընտանիքի ընդհանուր եկամտի մեջ:

Որոշակի բնակության վայր և բնակչության պետական ռեգիստրում հաշվառում չունեցող ընտանիքներին ևս սոցիալական աջակցության պետական ծրագրերից օգտվելու հնարավորություն կտրվի:

Հաստատվել են ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները և չափորոշիչները:

Սահմանվել է «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը», ըստ որի ընտանեկան բռնության զոհերին պետության կողմից կտրամադրվի նաև ֆինանսական աջակցություն՝ մինչև 150.000 դրամի սահմաններում:

Հաստատվել է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը, որի շնորհիվ առաջին անգամ Հայաստանում ներդրվել է ընտանիքում բռնության դեպքերի համապարփակ վիճակագրության հավաքագրման մեխանիզմ:

Փոփոխություններ են կատարվել «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին օրենքում», որի արդյունքում թրաֆիքինգի զոհ երեխաներին պետության կողմից տրամադրվում է միանվագ ֆինանսական աջակցություն՝ 250,000 դրամի սահմաններում:

Շփման գծում մարտական հերթապահության ժամանակահատվածը զինծառայության ստաժում այսուհետև կհաշվառվի կրկնակի չափով:

2020 թվականի հունվարի 1-ից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ կփոխհատուցվեն սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում ապրող կենսաթոշակառուների կոմունալ ծախսերը:

Հիմնանորոգվել և շահագործման է հանձնվել «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի անկողնային հիվանդների խնամքն իրականացնող հարկաբաժինը: Այն կարող է սպասարկել մինչև 35 տարեցի:

2019 թ. օգոստոսի 1-ից կրկնապատկվել է Հայրենական մեծ պատերազմի վետերանների ամենամսյա պատվովճարը՝ կազմելով 100.000 դրամ:

Հայրենական մեծ պատերազմի 30 մասնակցի առողջարանային բուժման անվճար ուղեգրեր են տրամադրվել:

Հայաստանում բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց ներվել է 5-17 տարի առաջ նրանց տրամադրված վարկերի նկատմամբ ունեցած պարտավորությունները: Այս որոշումը վերաբերում է 303 մարդու:

2019 թվականին հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվել է 12.171 հավաստագիր՝ անհրաժեշտ աջակցող միջոցների ձեռքբերման համար: Այդ թվում՝ անվասայլակ՝ 845 հատ, պրոթեզ՝ 902 հատ, օրթեզ՝ 771 հատ, լսողական սարք՝ 10.298 հատ:

Մշակվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքների նախագծերը, մշակվել և հաստատվել է Գենդերային ռազմավարությունը:

Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացմամբ պայմանավորված՝ լուծարվել են Դիլիջանի, Բյուրեղավանի,

Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ 4 հաստատությունները և Վանաձորի մանկատունը: Արդյունքում՝ շուրջ 190 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք: Բոլոր ընտանիքներին տրամադրվել է անհատական աջակցության փաթեթ՝ բնաիրային ապահովումից՝ մինչև բնակարանի վարձավճար:

Ավելի քան եռապատկվել են հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելող ծրագրերը՝ 2019 թվականի 110 ընտանիքի փոխարեն ծառայություն տրամադրելով շուրջ 360 ընտանիքի:

Գրեթե եռապատկվել են երեխաների ցերեկային ծառայությունները, 2019 թվականի 1160 շահառուի փոխարեն 2020 թվականին դրանք կտրամադրվեն շուրջ 3900 երեխայի (այդ թվում հաշմանդամություն ունեցող) Երևանում և հանրապետության բոլոր մարզերում՝ ընդգրկելով 30 խոշոր բնակավայր:

Նախատեսվել է բնակարանի գնման վկայագրեր տրամադրել մանկատան 300 շրջանավարտի: Մանկատան շրջանավարտներին բնակարանի գնման վկայագրեր կտրամադրվեն Հայաստանի Հանրապետության տարածքում 6.3 մլն դրամը չգերազանցող բնակարանների ձեռքբերման համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ակտիվ աշխատանքների արդյունքում իրականացվում է երեխաների վաճառքի հնարավոր դեպքերի ուսումնասիրություն: Իրականացվել են որդեգրման կարգի փոփոխության աշխատանքներ:

Նախարարությունն ավելի քան 70 հանրային քննարկում է իրականացրել Երևանում և ՀՀ մարզերում՝ կանանց հիմնախնդիրների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ժողովրդագրական իրավիճակի բարելավման վերաբերյալ: